ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑՉԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

2023Թ.

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Ստեղծագործական մտածողության և վերլուծական –համադրական կարողությունների զարգացումը հայոց լեզվի և հայ գրականության դասերին

Առարկա՝ Հայոց լեզու և հայ գրականություն

Հեղինակ՝ Անիկ Տաշչյան

Դպրոց՝ Երևանի Գ. Մարգարյանի անվան հ.94 ավագ դպրոց

Ղեկավար՝ Ա. Զոհրաբյան

Բովանդակություն

1.Ներածություն——————————————————3

2.Ստեղծագործական մտածողություն և

վերլուծական –համադրական կարողություններ————4

3.Ստեղծագործական մտածողությոան և

վերլուծական –համադրական կարողությունների զարգացումը

հայ գրականության դասերին——————————————8

4.Ստեղծագործական մտածողության և

վերլուծական –համադրական կարողությունների

զարգացումը հայոց լեզվի դասերին——————————13

5. Եզրակացություն——————————————————16

6. Օգտագործված գրականության ցանկ——————————17

Ներածություն

<<Երեխաներն ունեն տեսնելու ,մտածելու և զգալու իրենց

սեփական ձևը , և չկա ավելի անմիտ բան, քան ցանկությունը՝

փոխարինել այն մերով>>

Ժան Ժակ Ռուսսո

Կրթությունը ամենահզոր զենքն է, որը կարող ես օգտագործել աշխարհը փոխելու համար: Աշակերտի գլուխը ոչ թե անոթ է, որը պետք է <<լցնել>> գիտելիքով, այլ <<ջահ>>, որը պետք է <<վառել>>: Արդի պայմաններում կրթությունը հասարակական կյանքի անբաժան մասն է՝ նպատակաուղղված նույն հասարակության պահանջների բավարարմանը, աճող սերնդին նախապատրաստելու կյանքին և տվյալ ժամանակաշրջանի համար ձևավորելու լիարժեք ու ակտիվ անդամներ: Արդի հասարակական կյանքը պահանջում է , որ սովորողները պասիվ ունկնդրողից վերածվեն ակտիվ մասնակիցների: Այսպիսով, աշակերտները դառնում են անկաշկանդ ու ինքնուրույն, զարգանում է վերլուծական միտքը կամ այսպես կոչված՝ քննադատական մտածողությունը:

Ստեղծագործական մտածողությունը պատկերավոր,զգայական, ոչ կաղապարային հայեցակարգերի միջոցով տեղեկատվության մշակման և արարման գործընթաց է,որը առաջադրում է նորովի լուծումներ,կարևորում է նորարար գաղափարների ընկալումը և կիրառումը:

Արդի կրթական համակարգը պետք է միտված լինի սովորողի անձի ստեղծարար կարողությունների զարգացմանը: Բարդ, անլուծելի թվացող խնդիրները անէանում են,երբ դիմացինդ զարգացած երևակայությամբ ստեղծարար է:

Ստեղծագործական մտածողության զարգացման ուղղություններն են հենց նպաստում կրթական գործընթացի անկասելի առաջընթացին,քանի որ ստեղծագործական մտածողությունը սովորողի զարգացման կարևորագույն բաղադրիչն է,և այն նպաստում է նոր հիմնախնդիրների առաջխաղացմանը,ինչպես նաև այս կամ այն հարցի բազմաթիվ հնարավոր լուծումների մեջ առավել կարևոր և յուրատեսակ բացահայտումների

ներկայացմանը և կրթական այս կամ այն ոլորտում խորաոճ ներդրումների շեշտադրմանը:

Ստեղծագործական մտածողության առանցքային հատկանիշներից մեկը կրեատիվությունն է,որը բնութագրվում է հետևյալ չորսի համադրումով, այն է՝ արագությամբ,ճկունությամբ,ինքնատիպությամբ և խոսքի մշակվածությամբ:

1. ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ—ՀԱՄԱԴՐԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ստեղծագործական մտածողությունը նպաստում է կրթության բովանդակության շարունակական զարգացմանը:Ստեղծագործական մտածողությունը նպատակ ունի զարգացնել սովորողի երևակայությունը,նաև ձեռք բերած գիտելիքների ստեղծագործաբար կիրառումը և իրավիճակը դիտարկել ու մեկնաբանել՝ ելնելով նաև այլոց տեսանկյունից:

Վերլուծական-համադրական կարողությունների զարգացման հիմնաքարային առաջընթացը կրթության՝ որպես մեծագույն արժեքի գիտակցումն է ժամանակակից աշխարհում:

Մայրենի լեզվի և գրականության ուսուցման շնորհիվ սովորողը ձեռք է բերում ազգային արժանապատվության մշտամնա գիտակցում.իր նախորդների ստեղծած մշակութային արժեքները յուրացնելու ու նաև հաջորդ սերնդին փոխանցելու կարողություն: Հայոց լեզուն սեփական մտքերն ու հույզերը արտահայտելու,այլոց հետ շփվելու,շրջապատող աշխարհը հասկանալու,գրական-գեղարվեստական արժեքներին հաղորդակից դառնալու,սեփական ստեղծագործական ունակությունները դրսևորելու և զարգացնելու բացառիկ հնարավորություն է տալիս:

Հայոց լեզվի և գրականության դասերին են նաև զարգանում սովորողի ստեղծագործական մտածողությունը և վերլուծական-համադրական կարողությունները:

Բանավոր և գրավոր խոսք կառուցելու սկզբունքները՝պահպանելով քերականական հիմնական կանոններն ու օրինաչափությունները,ոճաբանական տարուբերումները արդեն իսկ վերլուծական-համադրական կարողությունների դրսևորում են,քանի որ յուրաքանչյուր հաղորդվող նյութ,ըստ էության, վերլուծվում է,վերացարկվում ու կշռադատվում: Նաև ուսումնասիրվում են արվեստի և գրականության նմուշներ ,վերլուծվում են և համեմատվում: Գրավոր շարադրում են սեփական մտքերը,գրագետ խոսքը դառնում է ինքնարտահայտման և ինքնադրսևորման միջոց: Գրվում են գեղարվեստական և վերլուծական բնույթի գրավոր աշխատանքներ,այսինքն հայոց լեզվի և գրականության յուրաքանչյուր դասաժամ նպաստում է ստեղծագործական մտածողության և վերլուծական-համադրական կարողությունների զարգացմանը:

Եվ ի վերջո, լեզվի մշակութային արժեքի գիտակցումը,մայրենիի և գրականության արժևորումը, նաև ինքնակրթության,ինքնադաստիարակության, ինքնակատարելագործման մղումը՝գրական երկերից սովորածի,նշանավոր մարդկանց կյանքի օրինակով հենց այս դասապրոցեսների տրամաբանական արդյունքն է դառնում:

Հայոց լեզուն՝որպես դասավանդման առարկա, ներառում է երկու կողմ. նախ՝ բուն լեզվի իմացություն, այսինքն՝այդ լեզվով հաղորդակցվելու,տարբեր բնույթի գրավոր ու բանավոր շարադրանք ստեղծելու կարողություն. երկրորդ՝ լեզվի քերականական կառուցվածքի իմացություն,որը,փաստորեն,լեզվաբանական գիտելիք է:

Հայոց լեզվի դասավանդման ժամանակ առարկայի բովանդակությունը,խնդիրներն ու նպատակները, նյութերի ընդգրկումն ու ծավալը որոշելիս հիմք է ընդունվում նաև մայրենի լեզվի դերը ինչպես ժողովրդի և անհատի համար, այնպես էլ դպրոցում ուսումնասիրվող մյուս առարկաների համատեքստում:

Հայոց լեզվի ուսուցումը սովորողի մեջ մշակում և կատարելագործում է ժամանակակից գրական հայերենի չափանիշներին համապատասխան խոսք կառուցելու,մայրենի լեզվի տարաբնույթ տեքստեր և գրականություն կարդալու,գրական երկի այլաբանական ենթիմաստը հասկանալու,ինքնուրույն մեկնաբանելու կարողություններ: Շեշտադրվում է

նաև բառարաններից,հանրագիտարաններից,տպագիր և էլեկտրոնային աղբյուրներից օգտվելու,իր տարիքին ու կրթական փուլին համապատասխան գեղարվեստական գիտահանրամատչելի գրականություն կարդալու,կարդացածը նորովի վերաշարադրելու՝ելնելով լեզվաոճական տարբերակումներից,նաև գործնական բնույթի տարատեսակ գրություններ կազմելու կարողությունը, ինչպես նաև տարբեր իրադրություններում համապատասխան խոսքային վարքագիծ դրսևորելու ունակությունը:

<< Հայ գրականություն>> առարկայի դասավանդման նպատակը գրական ստեղծագործությունների ուսումնասիրությունն է,որի ընթացքում սովորողներին համակարգված գիտելիքներ են հաղորդվում հայ գրականության պատմության,գրականության տեսության,հայ նշանավոր գրողների կյանքի ու գործի վերաբերյալ,ձևավորվում է քննադատական վերաբերմունք,վերլուծվում է գրական երկը՝կարևորելով հերոսների արարքների հոգեբանական հիմքերը:

Սովորողը որոշակի ստեղծագործություններ ինքնուրույն է ուսումնասիրում և հանդես է գալիս զեկուցումով:

Հայ գրականության դասավանդումը նպաստում է անհատի հոգևոր ու մտավոր զարգացմանը,անձի արժեքային համակարգի ձևավորմանը,բարոյական արժեքների՝ մարդասիրության,բարության,ընկերասիրության,ազնվության,պատվախնդրության,պատասխանատվության,հաստատակամության,բարեխղճության շեշտադրմանը,այսինքն՝ գրականությունը մարդագիտություն է:

Ստեղծագործական մտածողության և վերլուծական-համադրական կարողությունների զարգացումը հայոց լեզվի և հայ գրականության դասերին ուղիղ համեմատական է կրթության բովանդակությունը,ուսուցման մեթոդաբանությունը: Ընտրված մեթոդն է հենց շաղկապում ուսուցման՝ նախապես պլանավորված նպատակը և վերջնարդյունքը:

Մեթոդը հունարեն բառ է,որ բառացի թարգմանությամբ նշանակում է ինչ-որ տեղ տանող ուղի,ճանապարհ: Կրթության ճանապարհի

արդյունավետությունը ուսուցչի և աշակերտի համատեղ գործունեությունն է,որն էլ միտված է ուսումնական նպատակների իրականացմանը:

Ուսումնական գործընթացի հաջող իրականացման համար առաջնայինը ուսուցչի մեթոդամանկավարժական և պատրաստվածության աստիճանն է՝ պայմանավորված մասնագիտական կարողություններով,գիտելիքի ձեռքբերման ճանապարհին նրա ստեղծագործ և ինքնատիպ մոտեցումով: Չափազանց կարևոր է ուսուցման նպատակներից ու կանխատեսված արդյունքներից բխող մեթոդների ճիշտ ընտրության ու կիրառության կարողությունը ուսուցչի կողմից:

Ժամանակը նույնպես թելադրող պետք է լինի ուսուցչի և աշակերտի համատեղ գործունեության համար. ՏՀՏ-ների և համացանցի օգտագործումը զգալիորեն ընդլայնում են ուսումնական նյութի որոնման,հաղորդման,մատուցման և յուրացման հնարավորությունները:

Այսինքն՝ ուսումնական գործունեությունը բարդ ու բազմակողմանի գործընթաց է,որի արդյունավետ կազմակերպման համար պետք է հաշվի առնել ինչպես դասավանդողի, այնպես էլ սովորողի գործուն մասնակցությունը այդ գործընթացին:

Ստեղծագործական մտածողության և վերլուծական-համադրական կարողությունների զարգացման գործընթացի անհրաժեշտ պայմանը պետք է առաջ մղի ուսուցիչը և նպաստի,որ աշակերտն ընկալի և կիրառի այն ու հատկապես կարևորի.

- ինքնուրույն մտածողության դրսևորումը
- հարցի ճշգրիտ ձևակերպումը
- նախագծերի կազմումը և քայլ առ քայլ իրականացումը
- երևակայության ազատ դրսևորումը
- քննադատական մոտեցումը արդեն իսկ ընդունված տեսակետներին
- նախասիրությունների,ունակությունների,կարողությունների համապատասխանությունը առաջադրված նյութին
- խոսքի միջոցով իր անձի հանդեպ համակրանք առաջացնելու, իր և ուրիշների համար նպատակավոր մթնոլորտ ստեղծելու կարողությունը

Ստեղծագործական մտածողության և վերլուծական-համադրական կարողությունների զարգացումը հայոց լեզվի և հայ գրականության դասերին մշտապես կախված է՝

1. Առարկայի բովանդակությունից
2. Կրթությանը ներկայացվող պահանջներից ու դասավանդման եղանակներից
3. Աշակերտների անհատական կարիքներից
4. Սեփական ուսումնառության ոճից և դրա կարիքներից
5. Ընտրված գործիքների արդյունավետությունից
6. Թիմային աշխատանքից
7. Թեմայի վերլուծությունից և քննարկումից
8. Մոտիվացիայի ապահովումից
9. Ինքնաստուգումից
10. Ներքին և արտաքին հետադարձ կապից

2. ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ-ՀԱՄԱԴՐԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՍԻՆ

Ստեղծագործական մտածողության և վերլուծական-համադրական կարողությունների զարգացումը հայ գրականության դասին դիտարկենք կոնկրետ օրինակով.

Դասի պլան

1.առարկան՝հայ գրականություն

2. ամիս-ամսաթիվ

3. դասարանը՝10-րդ

4.թեման՝ Սայաթ- Նովա. <<Դուն էն գլխեն իմաստուն իս>> խաղը

5. դասի տևողությունը՝ 45 րոպե

Դասի խնդիրները

- բնագրային աշխատանք
- ստեղծագործության հերոսների բնութագրում
- սովորողների անհատական և զույգերով աշխատանքի,ազատ և անկաշկանդ արտահայտվելու,դատողություններ անելու,միմյանց հետ հաղորդակցվելու բարոյահոգեբանական մթնոլորտի ապահովում

Ուսումնական գործունեության տեսակները.

- անհատական
- զույգերով

Ուսումնական գործունեության ձևերը

- արտահայտիչ ասմունք
- հարցերի ձևակերպմամբ փոխստուգում և փոխգնահատում
- հեղինակի,նրա ստեղծագործության մասին հանրագիտարանային,լրացուցիչ տեղեկությունների հավաքում և ներկայացում
- աշխատանք բնագրով
- գրառումներ կատարելու և ստեղծագործաբար ներկայացնելու փորձ

Կիրառվող մեթոդները

- մտագրոհ

- ազատ և բաց հարցեր
- քառաբաժան

Միջառարկայական կապ

- աշխարհագրություն
- պատմություն
- ճաքանություն
- արվեստ

Վերջնարդյունքներ

- իմանա բանաստեղծությունը և մեկնաբանի
- հարստացնի իր իսկ ասելիքը գեղեցիկ բառակապակցություններով
- պատկերացնի անարդարությանը զոհ դարձած մարդու հոգեվիճակը
- գրի 5-6 տողից բաղկացած շարադրանք <<Զրպարտված անմեղություն>> թեմայով

Խաչվող հասկացություններ

- պատճառ և հետևանք
  պատանին և թագավորը
- կայունություն և փոփոխություն
  վստահություն և այլընտրանք
- անհատներ և հարաբերություններ
  բանաստեղծը և նախանձ պալատականները
- ժամանակ և տարածություն
  Թիֆլիս, Հինդ, Հաբաշ, Արաբ:

Դասի ընթացքը

Քայլ 1. Նախորդ դասի յուրացման ստուգում/3 րոպե/

Քայլ 2. Նոր նյութի ուսումնասիրություն՝ ԽԻԿ համակարգով /5 րոպե/

Ասմունք (բանաստեղծի կենսագրությունը ր բանաստեղծությունը)

Քայլ 3. Իմաստի ընկալման փուլ.

Նյութեր ընտրել Թբիլիսիի, Հավլաբարի մասին,զույգերով քննարկել,համակարգել և ներկայացնել: /5 րոպե/

Քայլ 4. 1.Ունկնդրել խաղը Շարա Տալյանի կատարմամբ: 2. Ժամանակի փիլիսոփայական միտքն ու ոգին ըմբռնած, իմաստնացած հերոսի արդար բողոքի դրսևորումը(անհատական աշխատանք)/7 րոպե/

Քայլ 5. Հրահանգ-հարցեր՝ ուղղված դասարանին/10 րոպե/

Աշխատանքը զույգերով է: Օգնության է գալիս աշխատանքային տետրը. հարցերի բովանդակային ուղղվածությունը

1. Ի՞նչ է պատկերում բանաստեղծությունը

2. Հերոսի հոգեկան աշխարհը ինչպիսի՞ն է

3. <<Զրպարտված արդարություն>> շարադրանք

4.Խաղը վերածել արև ելպահայերենի

Քայլ 6. Պատկերային համակարգի բացահայտում/ խոսքի պատկերավորման միջոցներ. փոխաբերություն,մակդիր,համեմատություն /4 րոպե/

Քայլ 7. Կշռադատման փուլ /7 րոպե/

<<Քառաբաժան աղյուսակ>>

1. Ի՞նչ էի տեսնում բանաստեղծությունը կարդալիս,լսելիս	2. Ի՞նչ էի զգում
3. Բանաստեղծության կապը իրական կյանքին ինչպե՞ս է առնչվում	4. Ի՞նչ է նշանակում <<ամեն մարդ չի կանա խմի՝ իմ ջուրն ուրիշ ջրեն է.ամեն մարդ չի կանա կարդա՝ իմ գիրն ուրիշ գրեն է >> արտահայտությունը

Քայլ 8. Գնահատման սանդղակ /2 րոպե/

9-10 Կիրառվել են բոլոր 7 քայլերը,խոսքը հարուստ է,արտահայտիչ,ունի ստեղծագործական մտածողություն,կարողանում է վերլուծել,մեկնաբանել

7-8 Կիրառվել են բոլոր 7 քայլերը մասնակիորեն,խոսքը հարուստ է,արտահայտիչ,կարողանում է վերլուծել,մեկնաբանել

5-6 Կիրառվել են քայլերի մի մասը,խոսքը այնքան էլ արտահայտիչ չէ, ստեղծագործական մեկնաբանությունը ըստ էության չէ

3-4 Կատարել է ընդամենը 3 քայլ,խոսքը միապաղաղ է,չի կարողանում վերլուծել ստեղծագործությունը

1-2 Հանձնարարություններից ոչ մեկը գրեթե կատարված չէ: Խոսքը միապաղաղ է,անարտահայտիչ:

Քայլ 9. Տնային աշխատանք /2 րոպե/

Գրել նամակ՝ ուղղված բանաստեղծի կամ Հերակլ արքային և վերնագրել այն:

3.ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ-ՀԱՄԱԴՐԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԴԱՍԻՆ

Թեմա՝ Բարդ ստորադասական նախադասության փոխակերպման իմաստային-քերականական առանձնահատկությունները

Դասի պլան

1. ամիս-ամսաթիվ

2. դասարանը- 11-րդ

3. առարկան- հայոց լեզու

4. դասի տևողությունը- 45 րոպե

Դասի խնդիրները

1. <<Բարդ ստորադասական նախադասություն>> և <<Դերբայական դարձված>> հասկացությունների վերհիշում և մեկնաբանում

2. <<Շարահյուսական հոմանիշներ >> հասկացության մեկնաբանում

3. Փոխակերպումը բանավոր և գրավոր խոսքում

4. Խոսքի արտահայտչականությունը

5. Քայլերի հերթականության պահպանում

Ուսումնական գործունեության տեսակները

- անհատական
- զույգերով
- խմբային աշխատանք
- աշխատանք հարցաթերթիկներով

Ուսումնական գործունեության ձևերը

- աշխատանք բնագրով
- ճիշտ փոխակերպում

Կիրառվող մեթոդները

- մտագրոհ,փոխգործուն նշանների կիրառում

Միջառարկայական կապ

- գրականություն
- արվեստ
- ոճաբանություն

Վերջնարդյունքներ

- Ոճական և հնչերանգային նրբիմաստների կայուն իմացություն
- <<Փոխակերպում>> հասկացության անթերի կիրառում
- Բարդ ստորադասական նախադասությունների և դերբայական դարձվածով նախադասությունների փոխակերպումը մեկը մյուսով
- Կետադրական կանոնների իմացություն և պահպանում փոխակերպման ժամանակ

Խաչվող հասկացություններ

1. Օրինաչափություն
2. Կառուցվածք և գործառույթ
3. Փոփոխություն և զարգացում
4. Պատճառ և հետևանք

Դասի ընթացքը

Խթանման փուլում ուսուցիչը աշակերտներին բաժանում է խմբերի, յուրաքանչյուր խմբին տալիս է հանձնարարություն .

1.գրել 5 բառային հոմանիշ

2. գրել 5<< բառակապակցություն-բարդ բառ>> հոմանիշ

3.բսն-դդ հոմանիշ նախադասություններ

Առաջադրանքի նպատակն է խթանել սովորողների հետաքրքրությունը,շարժել միքտը,մարզել հիշողությունը:

Այնուհետև խմբերին բաժանվում է ԲՍՆ –ան գերադաս նախադասությունները և առաջարկվում՝ ամբողջացնել դրանք ստորադաս նախադասություններով

/10 րոպե/Իմաստի ընկալման փուլում աշակերտները դիտարկում-վերլուծությունների միջոցով բացատրում են <<փոխակերպում>> հասկացությունը,նրա իմաստային-քերականական առանձնահատկությունները

1. տարբերակել գերադաս և ստորադաս նախադասությունները

2. որոշել ստորադաս նախադասության բնույթը

3. շաղկապների, հարաբերական դերանունների փոխակերպումը կապերի

4. ստորադաս նախադասության ստորոգյալի փոփոխությունը

Ձևավորված 3 խմբերին տրվում է հարցաթերթիկային(քարտային) աշխատանք:/10 րոպե/

Աշակերտները որոշում են տրված ԲՍՆ –երի պաշտոնը,փոխակերպում են ԴԴ-ով պարզ նախադասության՝հիմնավորելով փոփոխությունները:

Եթե որևէ խումբ սխալ է կատարել առաջադրանքը,ապա ուսուցիչը դիմում է մյուս խմբերին՝ դրանք ուղղելու և բացատրելու, աշակերտները գնահատում են մյուս խմբերի աշխատանքները, արտահայտում իրենց կարծիքը :

Ուսուցիչը կարող է օգնել,հուշող հարցեր տալ՝ ճիշտ պատասխանը ստանալու համար:

Կշռադատման փուլ /15 րոպե/

Ամրակայվում են ձեռք բերված գիտելիքները,մշակվում են գործնականում կիրառելու հմտություններն ու կարողությունները,կատարվում է շտեմարանային աշխատանք: Ուսուցիչը ուղղորդողի դերում է:

Գնահատման փուլ/2 րոպե/

Տնային աշխատանքի հանձնարարում /2 րոպե/

Գրել ռեպորտաժ՝ օգտագործելով ԲՍՆ և ԴԴ նախադասություններ:

Եզրակացություն

Ստեղծագործական մտածողության և վերլուծական-համադրական կարողությունների զարգացումը հայոց լեզվի և հայ գրականության դասերին շարունակական և երբեք չընդհատվող ընթացք է,քանզի հենց այս առարկաների դասավանդումն է նպաստում ստեղծագործական մոտեցում նույնիսկ կենսական խնդիրներին. հայ գրականության գաղափարական և հոգեբանական հարստությունն է ձևավորում մտածող և ստեղծագործող անհատի, իսկ լեզվագործածության հմտություններն ու կարողությունները հիմքն են ստեղծագործական մտածողության և վերլուծական-համադրական կարողությունների:

Օգտագործված գրականության ցանկ

1. Արնաուդյան Ա. և ուրիշներ. Մասնագիտական զարգացման ձեռնարկ ուսուցիչների համար. ԿԱԻ Ե. 2004 թ.

2. Ժամանակակից մանկավարժական մոտեցումները գործողության մեջ. <<Նոյյան տապան>> Ե. 2005թ.

3. Ուսուցման կոնստրուկտիվիստական մեթոդաբանություն. ձեռնարկ ուսուցիչների համար. ԱՅՐԵՔՍ, Ե. 2002թ. :